



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. հուլիսին /վերլուծություն/

2007թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13421 գործարքներ, որոնց քանակը 2006թ. հուլիսի համեմատ աճել է 42.3%-ով, իսկ 2007թ. հունիսի համեմատ՝ 3.4%-ով:

2007թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5149 օտարման գործարքների 84.5% կազմել են առուվաճառքները, 14.7%՝ նվիրատվությունները և 0.8%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.8%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.2% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. հուլիսին, 2007թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 4.7%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 28.8%-ով:

2007թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.3% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 12.8%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 17.9%-ով:

2007թ. հուլիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2006թ.	հուլիս 2007թ.	հունիս 2007թ.
Կենտրոն	371000	454800	454800
Արաբկիր	294900	376600	372500
Քանաքեռ-Զեյթուն	176700	276100	273000
Նոր-Նորք	165500	230100	228700
Ավան	149700	225500	217000
Էրեբունի	145000	228200	221700
Շենգավիթ	178100	251100	244000
Դավթաշեն	182800	250400	246200
Աջափնյակ	165900	242100	237000
Մալաթիա-Սեբաստիա	162900	228600	226700
Նուբարաշեն	110000	125400	124900
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>191100</b>	<b>262600</b>	<b>258800</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հուլիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. հունիսի համեմատ աճել են 1.5%:

2007թ. հուլիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 502 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. հունիսի համեմատ աճել է 3.1%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 24.6%-ով:

2007թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2006թ.	հուլիս 2007թ.	հունիս 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	61100	108500	106900
	Ապարան	25900	28600	28600
	Թալին	23900	37200	36100
Արարատ	Արտաշատ	47900	86000	85400

	Մասիս	54100	96600	92600
	Վեդի	37200	60500	58100
	Արարատ	39400	57700	56900
Արմավիր	Վաղարշապատ	79100	127100	126300
	Արմավիր	53700	93700	89800
	Մեծամոր	33900	60400	58400
Գեղարքունիք	Սևան	33000	63500	60900
	Գավառ	24900	36100	34500
	Մարտունի	38800	52700	50300
	Վարդենիս	21000	26300	26300
	Ճամբարակ	13200	14700	14700
Լոռի	Վանաձոր	48200	73000	71200
	Ստեփանավան	24800	39200	34300
	Սպիտակ	33400	46300	44800
	Ալավերդի	20400	25600	24900
	Տաշիր	19400	25300	24500
	Թումանյան	5100	5400	5400
	Շամլուղ	2700	3000	3000
	Ախթալա	10100	11600	11600
Կոտայք	Աբովյան	91500	149500	145700
	Նոր Հաճն	60900	104400	99500
	Բյուրեղական	43000	76400	73300
	Եղվարդ	56100	91500	89700
	Հրազդան	35100	51700	49600
	Ծաղկաձոր	73100	98600	94000
	Չարենցավան	39100	63000	60900
Շիրակ	Գյումրի	48400	72100	68800
	Արթիկ	29900	46800	44800
	Մարտիկ	21300	25700	25700
Սյունիք	Գորիս	52500	75100	72900
	Կապան	40430	68400	65400
	Սիսիան	33400	52800	50600
	Մեղրի	27800	38300	36900
	Ագարակ	19900	24700	23900
	Քաջարան	24600	32300	31000
	Դաստակերտ	6200	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	34900	60900	58100
	Եղեգնաձոր	53300	76900	73400
	Ջերմուկ	60500	107800	102800
Տավուշ	Դիլիջան	42300	69200	66300
	Իջևան	50300	91700	89500
	Բերդ	29900	33000	33000
	Նոյեմբերյան	16600	27800	27800
	Այրում	18000	20300	18000

2007թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. հունիսի համեմատ աճել են 3.4%:

2007թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 543 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 137, մյուս մարզերում միասին վերցրած՝ 406: 2007թ. հունիսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 11.3%-ով, ընդ որում Երևանում՝ 47.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.8%-ով: 2006թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է

25.1%-ով, ընդ որում Երևանում ` 29.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել` 23.8%-ով:

2007թ. հուլիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները` հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հուլիս 2006թ.	հուլիս 2007թ.	հունիս 2007թ.
Կենտրոն	386300	470100	468900
Արաբկիր	299200	382800	376500
Քանաքեռ-Զեյթուն	181000	279700	275200
Նորք-Մարաշ	186600	235200	233000
Ավան	150800	227800	219800
Էրեբունի	149200	230600	225300
Շենգավիթ	179000	253300	245200
Դավթաշեն	185300	254100	250800
Աջափնյակ	169200	245700	241700
Մալաթիա-Սեբաստիա	166300	232500	228900
Նուբարաշեն	111700	128400	127400
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>196800</b>	<b>267300</b>	<b>263000</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հուլիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. հունիսի համեմատ աճել են 1.6 % :

2007թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները` հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2006թ.	հուլիս 2007թ.	հունիս 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	65200	111200	109100
	Ապարան	27800	33200	33200
	Թալին	25100	39800	39500
Արարատ	Արտաշատ	49300	89300	88300
	Մասիս	55300	98600	95500
	Վեդի	38500	63600	62400
Արմավիր	Արարատ	40800	61400	60300
	Վաղարշապատ	80300	131500	130200
Գեղարքունիք	Արմավիր	54900	95100	92100
	Սևան	37700	65900	63100
	Գավառ	26100	39400	38100
Մարտունի	Մարտունի	40000	55000	53600
	Վարդենիս	22200	30500	30300

	Ճամբարակ	14700	18100	17600
Լոռի	Վանաձոր	49500	76900	76100
	Ստեփանավան	26500	39900	38100
	Սպիտակ	34500	49600	49300
	Ալավերդի	21900	29800	29500
	Տաշիր	21000	28200	27500
	Թումանյան	6900	8500	8300
	Շամլուղ	4200	5600	5600
	Ախթալա	11600	14700	14400
Կոտայք	Աբովյան	93800	153100	149100
	Նոր Հաճն	62300	108200	104400
	Բյուրեղավան	44100	78500	75400
	Եղվարդ	57300	95400	93300
	Հրազդան	36900	55300	53500
	Ծաղկաձոր	74900	136000	127000
	Չարենցավան	40300	65100	62900
Շիրակ	Գյումրի	49900	76300	74000
	Արթիկ	31100	48200	46400
	Մարալիկ	22900	28400	27900
Սյունիք	Գորիս	53800	77400	74700
	Կապան	41600	70000	67500
	Սիսիան	34500	56000	55700
	Մեղրի	28800	40700	40100
	Ագարակ	21000	26800	26800
	Դաստակերտ	8500	9700	9600
Վայոց Ձոր	Վայք	36000	62300	60100
	Եղեգնաձոր	54900	78800	75200
	Ջերմուկ	36700	55900	53200
Տավուշ	Դիլիջան	43600	71600	69500
	Իջևան	51400	93800	90700
	Բերդ	31100	36500	36500
	Նոյեմբերյան	17700	31400	31200
	Այրում	19200	21200	19200

2007թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. հունիսի համեմետ աճել են 2.8%:

Ընդհանուր առմամբ, 2007թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1928 միավոր /1726.37 հա/ հողեր, որից Երևանում` 157 միավոր /48.81 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 110 միավոր /7.97 հա/ հողեր, որից Երևանում` 50 միավոր /3.65 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 728 միավոր /1426.83 հա/, որից Երևանում` 6 միավոր /0.94 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 811 միավոր /99.17 հա/, որից Երևանում` 114 միավոր /35.81 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 346 միավոր /43.36 հա/, որից Երևանում` 35 միավոր /11.64 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 14 միավոր /139.05 հա/, որից Երևանում` 2 միավոր, /0.43 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 27 միավոր /17.75 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 2 միավոր /0.20 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. հուլիսին հանրապետությունում օտարված հողերից 1775 միավորի /1671.51 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 142 միավոր /47.46 հա/, նվիրատվության գործարքներ՝ 134 միավորի /49.38 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /0.51 հա/ և փոխանակության գործարքներ՝ 19 միավորի /5.48 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /0.0.84 հա/:

Հանրապետությունում 2007թ. հուլիսին, 2006թ. հուլիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 27.7%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 21.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 33.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ մնացել է անփոփոխ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 513.63 հա, որից 502.82 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 34.0% կամ 603 գործարքներ /568.92 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 42 գործարքներ /10.49 հա/, իսկ 65.7% կամ 1167 միավորը /1096.68 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 98 միավոր /36.81 հա/: 2007թ. հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 5 գործարք /6.93 հա/, այդ թվում կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. հուլիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	23	1.72	19	8.77	5	0.70	2	0.43	80	33.17	11	2.51
Արագածոտն	41	304.24	0	0.00	1	0.15	13	1.20	58	86.03	0	0.00	66	7.27	0	0.00
Արարատ	59	32.48	1	0.12	26	2.56	33	0.99	68	24.59	0	0.00	80	6.87	5	0.03
Արմավիր	28	118.61	0	0.00	5	0.27	27	1.04	92	384.21	1	0.06	126	9.20	5	0.24
Գեղարքունիք	13	24.32	0	0.00	8	5.04	11	1.47	10	13.76	0	0.00	16	2.13	3	0.01
Լոռի	1	0.40	0	0.00	14	1.13	18	3.87	49	179.80	5	138.07	8	0.89	5	1.08
Կոտայք	30	30.84	2	0.03	6	0.47	58	2.80	158	87.11	1	0.05	185	17.02	17	2.48
Շիրակ	1	2.00	0	0.00	17	0.52	23	1.66	28	36.91	0	0.00	5	0.26	6	0.24
Սյունիք	1	0.50	1	0.03	2	0.15	15	0.50	10	6.64	0	0.00	5	0.60	3	0.04
Վայոց Ձոր	1	2.20	0	0.00	0	0.00	16	1.93	12	43.17	0	0.00	8	0.70	0	0.00
Տավուշ	5	2.05	1	0.28	25	1.77	40	1.67	7	1.59	0	0.00	18	1.45	5	3.34
Ընդամենը	180	517.64	5	0.46	127	13.78	273	25.9	497	864.51	9	138.61	597	79.56	60	9.97

Ստորև ներկայացվում է 2007թ. հուլիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր		Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր					
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	հասարակական կառուցապ. հողերի							բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	հասարակական կառուցապ. հողերի				
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	25	7.51	0	0.00	8	0.19	17	7.32	17	2.99	0	0.00	0	0.00	15	1.54	2	1.45
Արագածոտն	5	0.13	0	0.00	0	0.00	5	0.13	50	305.47	41	304.24	0	0.00	1	0.15	8	1.08
Արարատ	9	0.02	0	0.00	0	0.00	9	0.02	110	36.13	59	32.48	1	0.12	26	2.56	24	0.97
Արմավիր	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	56	119.77	27	118.47	0	0.00	5	0.27	24	1.03
Գեղարքունիք	4	0.52	0	0.00	0	0.00	4	0.52	28	30.32	13	24.32	0	0.00	8	5.04	7	0.96
Լոռի	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	32	5.38	1	0.40	0	0.00	13	1.11	18	3.87
Կոտայք	9	0.32	2	0.03	3	0.27	4	0.02	87	33.81	30	30.84	0	0.00	3	0.20	54	2.77
Շիրակ	12	0.89	0	0.00	4	0.12	8	0.77	29	3.29	1	2.00	0	0.00	13	0.40	15	0.89
Սյունիք	4	0.12	0	0.00	1	0.09	3	0.03	15	1.06	1	0.50	1	0.03	1	0.06	12	0.47
Վայոց Ձոր	1	1.78	0	0.00	0	0.00	1	1.78	16	2.35	1	2.20	0	0.00	0	0.00	15	0.15
Տավուշ	18	0.33	1	0.28	1	0.01	16	0.04	53	5.42	5	2.05	0	0.00	24	1.75	24	1.62
Ընդամենը	91	11.65	3	0.31	18	0.70	70	10.64	493	545.99	179	517.5	2	0.15	109	13.08	203	15.26

Հանրապետությունում 2007թ. հուլիսին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.14 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. հուլիսին 2006թ. հուլիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 12.9%-ով: Ընդ որում Երևանում աճել է 17-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 9.1%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 8.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 49.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 17.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 75.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հուլիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	32	162.74	40.0	1776.7	301.8	43	74.61	362.2	6772.5	2650.9

Ապարան						6	2.23	90.6	767.6	364.5
Թալին	9	141.50	36.0	756.0	141.7	6	3.24	90.6	758.5	386.1
Ծաղկահովիտ						3	5.95	77.0	948.2	170.0
Արարատի մարզ										
Արտաշատ	50	24.28	59.7	2366.7	996.8	30	9.37	335.1	5418.0	1455.4
Մասիս	4	5.11	93.8	1028.8	405.4	21	7.91	181.1	6772.5	1841.5
Վեդի	5	3.10	160.0	250.0	194.0	17	7.31	203.8	4515.0	1246.7
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	0.64	40.2	43.7	41.9	26	191.57	294.3	4063.5	915.9
Բաղրամյան	23	116.77	20.3	600.3	111.7	32	174.56	90.6	677.3	577.2
Վաղարշապատ	2	1.06	35.9	35.9	35.9	34	18.08	443.7	9030.0	1563.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	1.20	96.8	96.8	96.8	6	2.77	190.2	496.7	372.4
Ճամբարակ	3	18.06	166.9	760.0	457.3	1	0.81	45.3	541.8	150.0
Մարտունի								45.3	1806.0	470.2
Սևան								45.3	451.5	192.1
Վարդենիս	9	5.06	223.5	700.0	467.7	3	10.18	27.2	532.8	247.5
Լոռու մարզ										
Ալավերդի						24	7.99	163.0	2483.3	1077.0
Գուգարք	1	0.40	691.2	691.2	691.2	2	2.61	226.4	2709.0	932.3
Սպիտակ								226.4	1490.0	512.8
Ստեփանավան						13	139.78	90.6	2257.5	361.0
Տաշիր						10	29.43	45.3	451.5	206.2
Վոտայքի մարզ										
Աբովյան	8	4.48	73.3	5700.0	1149.1	59	14.36	271.7	11287.5	3377.0
Եղվարդ	16	25.76	38.5	3857.1	536.4	83	54.19	172.1	11287.5	2384.1
Հրազդան	6	0.60	325.0	425.0	375.0	16	18.56	113.2	2709.0	939.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	2.00	14.1	14.1	14.1	9	6.55	249.0	1693.1	450.1
Ամասիա						6	15.47	36.2	237.0	115.1
Անի						12	13.95	108.7	361.2	242.8
Աշոցք								45.3	112.9	116.8
Արթիկ								63.4	1083.6	172.2
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.50	760.0	760.0	760.0			90.6	673.3	340.2
Կապան								54.3	841.6	224.1
Մեղրի						6	1.06	181.1	1784.2	490.1
Սիսիան						4	5.57	45.3	631.2	229.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	2.20	164.1	164.1	164.1	6	34.42	117.7	2524.8	1291.3
Վայք						6	8.75	54.3	1430.7	518.8
Տավուշի մարզ										
Բերդ						5	0.69	45.3	841.6	352.4
Իջևան	4	2.05	120.0	2331.0	974.8	2	0.90	240.0	1683.2	816.5
Նոյեմբերյան								45.3	3509.5	522.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հուլիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների
---------------------------------------	--	--



	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						58	53534.0	113.2	3612.0	2315.1
Ապարան						4	8080.0	113.2	632.1	193.5
Թային	1	1500.0	113.7	113.7	113.7	4	11100.0	45.3	361.2	93.6
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	8	8600.0	145.0	430.0	315.5	21	20997.0	135.8	2709.0	891.4
Մասիս	14	16000.0	407.9	410.0	409.5	53	37190.0	135.8	9030.0	1146.5
Վեդի	4	1010.0	638.4	774.1	701.6	6	10519.0	113.2	993.3	645.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	504	2061.8	2061.8	2061.8	21	18845.0	135.8	2257.5	1084.4
Բաղրամյան								81.5	270.9	130.0
Վաղարշապատ	4	2240.0	3828.0	3828.0	3828.0	105	73187.0	135.8	4515.0	1445.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						3	2596.0	135.8	903.0	355.5
Ճամբարակ						1	2825.0	45.3	135.5	95.9
Մարտունի	8	50400.0	61.4	157.3	85.7	5	5980.0	90.6	451.5	235.5
Սևան						4	5425.0	90.6	903.0	147.1
Վարդենիս						3	4467.0	45.3	225.8	106.6
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի								67.9	270.9	125.0
Գուգարք	3	1836.0	144.0	2108.9	1452.8	3	2251.0	67.9	2347.8	541.1
Սյիտակ						2	2080.0	63.4	451.5	124.1
Ստեփանավան	10	9300.0	75.6	76.4	76.0	3	4545.0	45.3	270.9	102.8
Տաշիր								45.3	135.5	68.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						97	83023.7	135.8	6772.5	1758.6
Եղվարդ	3	2000.0	1481.3	1617.0	1526.5	67	62483.0	135.8	6772.5	1885.9
Հրազդան						19	22543.0	135.8	9030.0	1234.8
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	8	2181.0	277.6	11538.5	2848.9	2	600.8	113.2	1535.1	326.4
Ամասիա						1	1000.0	45.3	135.5	68.5
Անի						2	983.0	67.9	180.6	97.5
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	5	1845.0	65.6	293.9	196.7			67.9	925.6	157.1
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս	1	600.0	1200.0	1200.0	1200.0	1	800.0	67.9	541.8	232.2
Կապան								67.9	632.1	200.9
Մեղրի						2	2270.0	67.9	406.4	115.1
Միսիան						2	2960.0	67.9	406.4	134.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						4	2620.0	67.9	1128.8	286.2
Վայք						4	4400.0	77.0	632.1	120.1
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						1	32.0	45.3	632.1	85.4
Իջևան	23	17502.0	79.2	2200.0	805.5	17	14472.0	67.9	1354.5	402.3
Նոյեմբերյան	1	32.0	446.6	446.6	446.6			45.3	632.1	127.5

2007թ. հուլիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ 0.16 հա մակերեսով, ընդ որում՝ 1-ական՝ Լոռու /0.10 հա/ և Կոտայքի /0.06 հա/ մարզերում:

2007թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 888 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.6%: Ընդ որում, վարձակալության գործարքների 41.7% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. հուլիսին 2007թ. հունիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 8.5%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ աճել՝ 40.1%-ով:

2007թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 64 բնակարանների, 33 անհատական բնակելի տների, 282 հասարակական, 41 արտադրական նշանակության օբյեկտների, 462 միավոր /2057.57 հա/ հողերի և 6 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. հուլիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 23 վարձակալության գործարքների /այդ թվում 7 միավոր /0.02 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. հունիսի համեմատ աճել է 43.8%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 3.3 անգամ:

2007թ. հուլիսին հանրապետությունում վարձակալված 2057.57 հա հողերից 2.16 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2055.41 հա հողերի 1.18 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 687.09 հա, որից 667.06 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1020.63 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. հուլիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	170.00	26	58.52
Արարատ	4	32.00	7	6.21
Արմավիր	0	0.00	4	40.75
Գեղարքունիք	55	425.52	73	241.54
Լոռի	0	0.00	39	230.51
Կոտայք	0	0.00	18	44.23
Շիրակ	0	0.00	40	265.73
Սյունիք	5	167.27	2	1.07
Վայոց Ձոր	0	0.00	4	21.30
Տավուշ	2	225.84	15	38.01
<b>Ընդամենը</b>	<b>67</b>	<b>1020.63</b>	<b>228</b>	<b>947.87</b>

2007թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2396 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.9%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. հունիսի համեմատ աճել է 11.5%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 2.3 անգամ:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.2%/, առանձնատների /25.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /10.6%/ և հողերի /10.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1036 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. հունիսի համեմատ աճել է 16.3%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ՝ 2.0 անգամ:

2007թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 596.94 հա հողեր, որից 2.13 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 97.6% կամ 582.77 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.07հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 468.79 հա, որից 468.24 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 9 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. հունիսի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 13.3%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ աճել՝ 85.7%-ով: 2007թ. հուլիսին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 30.8 %՝ Կոտայքի մարզում, 23.1%՝ Արարատի մարզում, 15.4-ական%՝ Երևանի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում:

2007թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2113 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. հունիսի համեմատ նվազել է 6.7%-ով, իսկ 2006թ. հուլիսի համեմատ աճել՝ 36.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.3%/:

#### ***ԱԳՎՊԿ լրատվական ծառայություն***